№ 1(5)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2018

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

1 (5)

ԵՐԵՎԱՆ 2018
ЕРЕВАН 2018
YEREVAN 2018

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №1 (5). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2018. – 140 с.

ISSN 1829-4820

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

ИНФОРМАЦИОННЫЙ БЛОК

АКАДЕМИК Э.Р. АТАЯН КАК ФИЛОСОФ-ЯЗЫКОВЕД

С.А. Амирджанян

Кандидат филологических наук, доцент
АГПУ им. Хачатура Абовяна, Ереван, РА

АННОТАЦИЯ

Научно-педагогическая деятельность академика Э.Р. Атаяна получила развитие на факультете общего языкознания ЕГУ. Его научная деятельность связана с современным языкознанием, философией, знаковыми системами. Научные работы Э.Р. Атаяна позволяют назвать его одним их основоположников современного языкознания.

Վերջերս լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աթայանի 85–ամյակը: Երախտագիտության խորին զգացումով եմ հիշում նշանավոր լեզվաբան փիլիսոփային, ով իր մեծ ներդրումն ունի գիտության բազմաթիվ ոլորտներում՝ լեզվաբանության, փիլիսոփայական, նշանագիտական, ռուսագիտության, լեզուների տիպաբանության, թարգմանչության հիմնախնդիրներին վերաբերող հոդվածներով ու աշխատություններով:

Է. Աթայանը ավարտել է Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը և ԵՊՀ ասպիրանտուրան: Դասախոսել է վերոհիշյալ բուհերում, 1972–1977թթ. ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի վարիչն է եղել, 1987թ-ից՝ լեզուների տիպաբանության, ռուսաց լեզվի տեսության և մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, 1987–1993թթ.՝ այդ ամբիոնի

վարիչը: Նա 1965թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, 1984թ. փիլիսոփայական գիտությունների դոկտոր էր, 1986թ. ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ. ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, իսկ 1993 թվականից եղել է Հայկական փիլիսոփայական ակադեմիայի ակադեմիկոս, փոխնախագահ: 1999թ. գիտության և կրթության բնագավառում ձեռք բերած վաստակի համար պարգևատրվել է «Մովսես Խորենացի» շքանշանով:

Է. Աթայանի լեզվաբանական աշխատությունները նվաճումներ են լեզվի ընդհանուր տեսության հիմնախնդիրների ուսումնասիրության ոլորտում, մասնավորապես լեզվի և իրականության փոխհարաբերության, շարահյուսական նվազագույն միավորի և նվազագույն կառուցվածքի յուրահատուկ մեկնաբանությամբ:

Նա հայ իրականության մեջ նշանավոր լեզվաբան Մ. Աբեղյանին համարելով կառուցվածքային շարահյուսության հիմնադիրը՝ զարգացրեց նրա տեսությունը՝ ասույթի՝ իրականում բայ-ստորոգյալով մեկ գլխավոր անդամ ունենալու տեսակետը: Իրոք, Աբեղյանը համարվում է բայակենտրոն տեսության հիմնադիր: Նա դեռևս 1929թ. լույս տեսած «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ առաջնությունը տալիս էր բային /էջ 30–31/:

Է. Աթայանը ասույթի կառուցվածքը ճշգրտորեն բացահայտելու համար ճշգրտորեն որոշեց նրա բաղադրիչների սահմանները՝ ներմուծելով շարահյուսական նվազագույն անդամի և շարահյուսական նվազագույն կառույցի հասկացությունները, ցույց տվեց, որ ասույթի N թվով անդամներ ունենալու դեպքում նրանում առկա են N-1 հարաբերություններ, հետևաբար՝ նույնքան էլ կառույցներ: Նա ապացուցեց, որ երկանդամից ավել կառույցները փնջային կառուցվածք են ձևավորում՝ ըստ նրանցում առկա ընդհանուր կամ կենտրոնական տարրի, փնջային կառուցվածքի կառույցների կապակցությունը կատարվում է նույն կանոններով, որոցով նվազագույն միավորներից նվազագույն կառույցներ են կազմավորվում:

Այդ կառուցվածքի մեջ կապակցող դեր է կատարում ընդհանուր անդամը, վերջինիս միջնորդավորմամբ են տարբեր կառույցներ հարաբերվում։

Լեզվաբանն իր «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը» /1981թ./ աշխատության մեջ հիմնավորում է լեզվական միավորների, լեզվական երևույթների՝ արտաքին աշխարհով պայմանավորվածությունը. «Յուրաքանչյուր իրողություն հատուկ է ոչ միայն լեզվին, այլև յուրաքանչյուր արտալեզվական ոլորտի և միայն այդ պատճառով՝ նաև լեզվին՝ ընդգրկելով աշխարհում եղածն առհասարակ»։

Է. Աթայանը ստեղծել է նաև լեզվագոյաշերտերի ուսմունքը, որով նա լեզու/խոսք երկատումը բացահայտում է լեզվաբանության ոլորտում նոր տեսակետով՝լեզվախոսքային ամբողջության եռատմամբ՝ ոչ միայն վեր հանելով այդ ամբողջության տրամաբանական, հոգեբանական և հնչյունաբանական գոյամակարդակները, այլև ներկայացնելով դրանց անցումները։ Այդ գոյամակարդակների համար լեզվաբանը կիրառում է համակարգ, /շարակարգ/, գծակարգ եզրույթները։

Լեզվանշանագիտության ասպարեզում արժեքավոր է լեզվաբանի՝ «Նշանը սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների համակարգում» հոդվածը /ԲԵՀ, 1993, №2, էջ 17–33/։ Ըստ նրա՝ նշանի ուսումնասիրությունն ինքնանպատակ կլինի, եթե չիմաստավորվի հաղորդակցական դերի բացահայտմամբ։ Նա սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների համակարգում հաղորդակցման վեց տեսակ է առանձնացնում, որը ևս նորություն էր նշանների ուսումնասիրության ոլորտում։ Ըստ լեզվաբան-փիլիսոփայի՝ հաղորդակցման տեսակներն են. 1) բուն L իմաստով հաղորդակցումը, որը միջսուբյեկտային հաղորդակցում է /UU գերնշանայնություն/, 2) թերի հաղորդակցման բուն նշանային օբյեկտ-սուբյեկտային հաղորդակցում, որը ճանաչողական կամ տեսական հաղորդակցում է /OU/ օբյեկտը ներազդում է այդ օբյեկտն արտացոլող սուբյեկտի գիտակցության վրա/, 3) նախորդին հակադիր ուղղվածությամբ սուբյեկտ-օբյեկտային թերի հաղորդակցում /UO/ /սուբյեկտը ներգործում է օբյեկտի վրա

/ներգործական հաղորդակցում//, 4) միջօբյեկտային /ՕՕ/ /սաղմնային հաղորդակցում/, 5) միատարր կամ զրոյական հաղորդակցում /Օ/ /արտահաղորդակցական օբյեկտի ինքնաբավ գոյ /անգիտակցություն//, 6) միատարր հաղորդակցում կամ ինքնահաղորդակցում /U/. հաղորդակցման բարձրագույն ձևը /գերգիտակցություն/. հաղորդակցման այս տեսակը հնարավոր է միջսուբյեկտային հաղորդակցման հիմքով։

Կարելի է ասել, որ հաղորդակցման վերոհիշյալ տեսակների աթայանական մեկնաբանությունը յուրօրինակ է և հավաստում է լեզվանշանագիտության և փիլիսոփայության փոխկապակցված լինելը։

Որպես կառուցվածքաբան՝ Է. Աթայանը լեզվական միավորը նշանային համակարգ դիտելով՝ միավորի համակարգ լինելը ապացուցում է ամեն մի նվազագույն միավորի մեջ ողջ լեզվականության պարփակվածությամբ, ինչպես հնչյունն իր նյութական հատկանիշների համակարգային փոխկապակցվածությամբ։

Լեզվաբանն իր՝Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը՝ /1981, էջ 241/ աշխատության մեջ լեզվախոսքային հարաբերությունների բազմաթիվ հնարավորություններ է պարզաբանում՝ լեզվական բովանդակության և խոսքային արտահայտության տարակերպ տեսակներով։ Նա հակադրվելով Ֆ. Սոսյուրի՝ նշանի երկկողմ էությանը՝ նշանային կառուցվածքի իննանդամ համակարգ է ներկայացնում։ Ըստ լեզվաբանի՝ նշանակման մեկնաբանությունը ներկայանում է յուրօրինակ խաչ հիշեցնողի տիրույթով, որի ուղղաձիգ մասն ունի գոյամակարդակային եռանդամ անցումայնություն՝ նշանակցման միջնորդությամբ լեզվական նշանակումից մինչև խոսքային նշան, նույն միջնորդավորմամբ լեզվի և խոսքի անցակետում ևս եռանդամ անցումայնություն՝ հարթաձգորեն, լեզվական բովանդակության և արտահայտության և խոսքային բովանդակության և արտահայտության անցակետերում նշանակցումից անկախ՝ նշանակում և նշում, որոնք, սակայն, բևեռային անցումներ են նշանակցման միջնորդավորմամբ։ Նշանակումային բևեռ-

ների կենտրոնատեղին ներկայացնող նշանակցումը նշանակման կցորդ չէ, այլ, կենսական կենտրոն, ոճական աղբյուր, որից սկիզբ են առնում նշանի մյուս հայեցակերպերն առաջ բերող դրդիչները՝ /նույն տեղում, էջ 241/:

Այս հարաբերություններում նվազագույն /մեկական/ հարաբերակցիչ ունեցող բևեռներն են հարթաձգորեն համակարգային տիրույթում նշանակվողն ու նշանակողը, գծագրական տիրույթում՝ նշվողն ու նշողը: Գոյաբանական հարաբերությամբ բևեռներ են կազմում /նվազագույն հարաբերակցիչներով/ մի կողմից՝ նշանակողն ու նշվողը, մյուս կողմից՝ նշանակողն ու նշողը:

Է. Աթայանը չի ընդունում նաև լեզվական նշանին զուտ պայմանականություն վերագրող մոտեցումը՝ բնականությունն ու պայմանականությունը լեզվում որոշելով ինքնանշանակման և այլանշանակման «սահմանաձողերով»: Լեզվական նշանը բնական է իբրև ինքնանշան և պայմանական՝ իբրև այլանշան, այսինքն՝ բնական է արտալեզվական բաղադրիչների հարաբերությամբ, պայմանական՝ ներակայորեն /«Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերումը», 1981, էջ 258/:

Այսպիսով, ակադեմիկոս Է. Աթայանն իր գիտական աշխատություններում նորովի և յուրօրինակ է մեկնաբանում արդի լեզվաբանության, փիլիսոփայության, նշանագիտության կարևոր հիմնախնդիրները:

ЛИТЕРАТУРА

1. Աբեղյան Մ. Հայոց լեզվի տեսություն: – Երևան, 1923:
2. Աթայան Է. Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը: – Երևան, 1981:

3. Աթայան Է. Լեզուների ձևաբանական տիպաբանության առարկան և անհատական լեզվական ձևի բացահայտման խնդիրը, ԲԵՀ: – Երևան, 1988. – №2:
4. Աթայան Է. Նշանը սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների համակարգում, ԲԵՀ: – Երևան, 1990. – №3:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Է. ԱԹԱՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԲԱՆ ՓԻԼԻՍՈՓԱ

Ս.Հ. Ամիրջանյան

Բանասիրական գիտությունների թեկնածու,
Խաչատուր Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի դոցենտ, ք. Երևան, ՀՀ

ԱՄՓՈՓՈՒՄ

Ակադեմիկոս Է. Աթայանը գիտամանկավարժական գործունեությունը ծավալել է ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնում: Նրա գիտական գործունեությունը կապված է արդի լեզվաբանության, փիլիսոփայության, նշանագիտության հետ: Իր նորարարական տեսակետներով նրան կարելի է համարել ժամանակակից լեզվաբանության հիմնադիրներից մեկը:

ACADEMIK E. ATAYAN AS A LINGUIST AND PHILOSOPHER

S. Amirjanyan

Candidate of philological sciences, associate professor
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia

SUMMARY

Eduard Atayan carried our his scientific and teaching activity at Yerevan State University in the Chair of General Linguistics. E.Atayan contribution to modern linguistics, philosophy and semiology is great.

His scientific work is the closely –intertwind combination these three scientific categories. Due to his outlook, insight and style E.Atayan is considered to be the founder of modern linguistics.